ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

Լերմոնտովո համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 13-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Բոլոտին Իվանը, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյով, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 5, **դեմ՝ 0 ընդունվեց որոշում**:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N24/՝

1. Լերմոնտովո համայնքի ավագանու 19.12.2022 թ-ի թիվ 43 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.Մ Բոլոտինա

2. Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին

զեկ.Մ Բոլոտինա

3."Լերմոնտովո խոշորացված համայնքի Լերմոնտովո բնակավայրի 200քմ ճանապարհի վերանորոգում՝ ասֆալտի շերտի վերականգնում և Անտառաշեն բնակավայրի գազաֆիկացում" սուբվենցիոն հայտին հավանություն տալու մասին

զեկ.Ռ.Խեչումյան

4.Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին

զեկ.Ա.Գալուստյան

5.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին

զեկ.Ա.Գալուստյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. <u>ԼՍԵՑԻՆ</u> – Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2022 թ-ի դեկտեմբերի 19-ի "Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեն հաստատելու մասին" թիվ 43 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց փոփոխությունների անհրաժեշտությունը և ավագանու անդամները հայտնեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, **ընդունվեց որոշում: /N25/**

2. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան ներկայացրեց 2023 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաշվետվությունը՝ ինչը ավագանու անդամները ընդունեցին ի գիտություն:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, **ընդունվեց որոշում: /N26/**

3. <u>ԼՍԵՑԻՆ</u> - "Լերմոնտովո խոշորացված համայնքի Լերմոնտովո բնակավայրի 200քմ ճանապարհի վերանորոգում՝ ասֆալտի շերտի վերականգնում և Անտառաշեն բնակավայրի գազաֆիկացում" սուբվենցիոն հայտին հավանություն տալու մասին որոշման նախագիծը

- զեկուցեց Լերմոնտովո համայնքի ղեկավարի տեղակալ Ռոզա Խեչումյանը: Նա մանրամասն ներկայացրեց սուբվենցիոն հայտը: Նշեց, որ միջհամայնքային ճանապարհների խդնիրը դեռևս մնում է կարևորներից մեկը, և հնարավորություն լինելու դեպքում ձգտում ենք լուծել այն: Համայնքի ղեկավարի տեղակալը նշեց հաև, որ ներկայացված է Անտառաշեն բնակավայրի գազաֆիկացման հայտը. Գյուղը մինչև օրս գազ չի ունեցել: Օգտվելով կառավարության կողմից տրամադրվող սուբվենցիաներից ուրոշեցինք ներկայացնել այս հայտերը Հնչեցին հարցեր ավագանու անդամների կողմից գումարների վերաբերյալ՝ պատասխանեց համայնքի առաջատար մասնագետ-հաշվապահը, նշելով համայնքի և կառավարության ներդրումների տոկոսային հարաբերությունները: Հատուկ նշվեց, որ ազգային փոքրամասնություններին հավելյալ գումար է տրամադրվում:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, **ընդունվեց որոշում: /N27/**

4. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց երկու հողամասերը, որոնք ենթակա են աճուրդ-վաճառքով օտարելուն, ավագանու անդամների հետ որոշվեց մեկնարկային գինը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, **ընդունվեց որոշում: /N28/**

5. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց երեք հողամասերը, որոնք ենթակա են վարձակալությամբ տրամադրելու, ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը 25 տարի ժամկետով տրամադրելու այդ հողամասերը, սահմանելով համապատասխան մեկնարկային գիները:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, **ընդունվեց որոշում: /N29/**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

5.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ